

դպրոցն ունեցել է 9 դասարան՝ 355 սովորողներով, ամենամեծ դպրոցը՝ 24 դասարան՝ 1075 սովորողներով: Լրացուցիչ դպրոցներում սովորում էին 57253 տղայ և 9,587 աղջիկ: Քաղաքային և պետական գիմնազիաների թիւը՝ 16., բէալական գիմնազիաների և բարձր բէալ. դպրոցների թիւը՝ 11. բէալական դպր.— 14, օրիորդաց բարձր դպրոցներ—14, օրիորդաց բարձր դպրոցներ՝ 10—օրիորդաց մասնաւոր բարձր դպրոցներ—14: 1910 թւականին քաղաքային տարր. դպրոցների համար քաղաքը ծախսել է 250,026,628 մարկ, այն է՝ ամեն մի աշակերտի համար 110,6 մարկ (մ. = 47 կոպ.): Գիմնազիաների և ուրիշ միջնակ. դպրոցների համար 1911-ին ծախսւել է 7,495,200 մարկ:

1911-ի վերջին քաղաքային դպրոցներում եղել են՝ 302 եկտոր, 3270 ուսուցիչ և 1682 լիակատար իրաւունքներով վարժուհի:

Եկտորների ուճիկը եղել է՝ 5250 մարկից սկսած մինչև 6250 մարկ: Ուսուցիչներին ուճիկը՝ 1660 մարկից մինչև 4850 մարկ: Վարժուհիներին ուճիկը՝ 2060 մարկից սկսած մինչև 3410 մարկ:

Գիմնազիաների և միւս միջնակ. դպրոցների տեսուչները ստացել են 8500 մարկից սկսած մինչև 10900 մարկ: Տարր. դպրոցների աւագ ուսուցիչները՝ 3900 մարկից սկսած մինչև 8400 մարկ:

Քաւարական վարժուհիների տունը.— Գերմանիայի Ուսուցչ. Միութեան ճիւղերը օրէցօր աճում և զարգանում են: Ուսուցչ. Միութիւնը վերջերս հարստացաւ մի գեղեցիկ շէնքով Պէպայցում, շքեղապատւած տերրաններով և պարտէզներով:

Մանկավարժութեան ամբիոն. Միւնխէնի համալսարանում՝ մի քանի տարուց վեր մանկավարժութեան զասախօսութիւններ է կարգում պրիւտ-դոցենտ դ. ր Անդրէէ-ն: Ներկայումս վճռւած է նոյն համալսարանում հիմնել մանկավարժութեան յատուկ ամբիոն, որ այսուհե-

տե կլինի փրկիտփ. Ֆակուլտետի պարտադիր առարկաներից մէկը: Պրոֆեսորութեան հաւանական թիւին աճու համարւում է նոյն Անդրէէ-ն:

Գերմաներէն լեզուով լոյս տեսնող մանկավարժական օրգանների թիւն է ներկայումս—44: Դրանցից 345-ը լոյս են տեսնում Գերմանիայում, 64-ը Աւստրիայում, 27-ը Շւէցարիայում և Ռուսաստանում, 3-ը Ամերիկայում, 1-ը Ասիայում:

Տնային ընթերցանութեան կազմակերպութիւնը Անգլիայում.— Լոնդոնում գոյութիւն ունի «Տնային ընթերցանութեան ազգային միութիւն», որ նըպատակ է դրել տնային սիստեմատիկ ընթերցանութեան գործին նպաստելը: Տարեկան 1—4 շրկիւնդ(այսինքն 50կ.—2 ր. անդամավճար տալով. ամեն ոք կարող է Միութեան անդամ դառնալ և օգուել տնային ընթերց. կազմակերպութիւնից: Անդամները մեծ մասով բանւոր դասակարգից են:

**ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԱՐԳՐՈՒԹԵԱՆ**

**I.**

Ամերիկահայ Ուս. Միութիւնը որոշած ըլլալով հանդիսաւորապէս տօնել Հայ Տպագրութեան Չորսհարիւրամեակը, ընտրած է յանձնախումբ մը, որ ներկայիւ կուզայ ծանուցանել Ամերիկահայ յարգոյ հասարակութեան թէ հարկ եղած նախնական քայլերն առնւած են այդ մասին, ու մօտ օրէն վերջնական կարգադրութիւնները կը լրանան և Հայ մամուլի միջոցաւ կը հրատարակւին:

Սակայն նկատելով դէպքին պատմական կարևորութիւնն ու ազգային հանգամանքը, Յանձնաժողովս անհրաժեշտ դատեց այժմէն իսկ դիմել հանրային աջակցութեան, արժանաւոր կերպով կատարելու համար մտադրւած հանդէսը: Ուստի հրատարակաւ կը խնդրենք Ամերիկահայ Մամուլի ներկայացուցիչներէ, Հայ տպագրիչներէ և հրատարակիչներէ, հեղինակ-մատենագիրներէ, մտաւորականներէ, ինչպէս նաև ամբողջ Հայ ժողո-

վուրդէն, որ իրենց հովանաւորութիւնն ու օժանդակութիւնը շնորհեն Ուս. Միութեան սոյն ազգօգուտ ձեռնարկին, և ամբողջ Ամերիկահայը մէկ կամ միւս կերպով մասնակցի տօնախմբութիւնը համազգային ընկելու:

Կուզենք այս առթիւ մասնաւոր կերպով շեշտել թէ հանդէսի կարեւորագոյն մասերէն մին պիտի ըլլայ Յուցադրութիւնը Ամերիկահայ տպագրական գործերու, իրական գաղափար մը տալու համար Հայ Տպագրութեան անցեալ ու ներկայ վիճակին ու արդիւնքներուն նրկատմամբ, ու մանաւանդ տեսնելու անոր զարգացման քայլերը:

Հետեւեալը պիտի խնդրենք Հայ մամուլէն, հրատակիչներէ, տպագրիչներէ, գրավաճառներէ և ամեն գրասէր Հայերէ, որ եթէ ունին իրենց ձեռքին տակ Ամերիկայի ու մէկ քաղաքին մէջ տպուած Հայերէն գրքերու, թերթերու, յայտագիրներու, թուղթիկներու, հրաւիրագրերու, տոմսակներու ևն. ևն. նմոյշներ, հաճին մեզի զրկել զանոնք ստորև գրուած հասցեով, անոնց վրայ նշանակելով տպագրութեան տեղն ու թւականը և տպագրչին անունը, եթէ ծանօթ են, ինչպէս նաև զրկողին անունն ու հասցէն: Անոնք որ իրենց նմոյշները ետ ունենալ կուզեն, թող վրան նշանակեն «վերագարձուր», և իրենց ետ կը զրկւին՝ հանդէսը լրանալէ ետք:

Հանդէսը տեղի պիտի ունենայ Պոսթոնի մէջ, Պլասանողներու Տարեկան Համագումար ժողովին երրորդ օրը, Յունիս 23, 1912: Ձեռնհաս և մասնագէտ անձերու կողմէ բանախօսութիւններ տեղի պիտի ունենան հետեւեալ նիւթերուն վերայ, 1) Հայ տպագրութեան ծագումն ու զարգացումը: 3) Տպագրութիւնը Ամերիկահայոց մէջ: 3) Հայ գիրերն ու անոնց գործածութիւնը Տպագրութեան տառ: 4) Արդի տպագրական արհեստը իբր քաղաքակրթական ազգակ:

Մասնաւոր հրաւեր զրկուած է Ամերիկահայ մամուլին և կը թասիրական ըն-

կերութիւններու, որ գործօն դեր ունենան հանդէսը իր անունին արժանի տօնախմբութիւն մը ընելու: Պիտի հրաւիրին նաև օտար մամուլի ներկայացուցիչներ և այլևայլ դասակարգի պատկանող Հայ ազգայիններ իրենց մասնակցութիւնը բերելու:

Յանձնախումբս շատ ուրախ պիտի ըլլայ ընդունելու ունէ թելագրութիւն՝ ծրագրուած Չորսհարիւրամեակը աւելի ճոխ և միանգամայն օգտակար կերպով տօնելու: Գործի կանոնաւորութեան սատարած ըլլալու համար կը խնդրենք որ ամեն տեսակ տպագրական նիւթեր զրկւին առ

A. H. CHAMICHIAN

P. O. Box 111,

Cambridge Mass.

Իսկ թղթակցութիւններ և թելագրութիւններ զրկւին առ

The ARMENIAN STUDENTS ASSO.

Centennial Committee

T. C. Box 187,

Columbia University

New York City

ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Հայ տպագ. Չորսհարիւրամեակի

Ա. Ո. Միութեան

II.

Յորհրդարանս պատիւ ունի խնդրել խմբագրութեանդ տեղ տալ «Նոր Դպրոցի» մէջ հետեւեալին.

Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական ընկերութիւնը որոշել է սահմանել հինգհարիւր քուրու մրցանակ տարրական միդասեան և երկդասեան դպրոցների համար մանկավարժական վերջին պահանջներին համապատասխան լաւ կազմած հայոց լեզուի դասագրքի համար:

Դասագրքը կազմել և մրցանակաբաշխութեան մասնակցել ցանկացողները ի նկատի պէտք է ունենան, որ

1. Դասագրքը բաղկացած պէտք է լինի հինգ մասից—երկդասեան դպրոցի հինգ բաժիններին համապատասխան.